ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

# ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**19 -17**

« 16» մարտի 2017թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Վահագնի համայնքի ավագանու 10.03.2017թ. թիվ 6 , թիվ 7 և թիվ 8 որոշումներ:

Առդիր 3 թերթ:

Վահագնի համյնքի ղեկավար Ղ.Քոչինյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Վահագնի համայնք, գ. Վահագնի, հեռ.0322- 6-95-37
էլ. փոստ՝ vahagni.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» մարտի 2017 թ. N 06

### ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով Վահագնի համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Վահագնի համայնքի ավագանու 2017թ.-ի մարտի 10-ի նիստի օրակարգը:

Օրակարգ

Վահագնի համայնքի ավագանու 2017թ.-ի մարտի 10-ի նիստի

1. Վահագնի համայնքի վարչական տարածքում գտնվող, Վահագնի համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողերի գործառնական նշանակության փոփոխադրելու մասին
2. Վահագնի համայնքի սեփականություն հանդիսացող գույքը ,,Լոռի-ջրմուղկոյուղի,, ՓԲԸ-ին նվիրաբերելու մասին:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մայիլյան Պետրոս | | | |
| Մքոյան Էդիկ | | | |
| Քոչինյան Գարեգին | | | |
| Քոչինյան Տելեմակ | | | |
| Օհանյան Լևոն | | | |

Համայնքի ղեկավար՝ Պ.Քոչինյան

գ. Վահագնի
10.03.2017թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Վահագնի համայնք, գ. Վահագնի, հեռ.0322- 6-95-37
Էլ. փոստ՝ vahagni.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» մարտի 2017 թ. N 07

## ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 18-րդ հոդվածի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով ՀՀ Լոռու մարզի Վահագնի գյուղական համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հավանություն տալ ՀՀ Լոռու մարզի Վահագնի համայնքի վարչական տարածքում գտնվող, Վահագնի համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող, 06-103-0039-0029 կադաստրային ծածկագրով 0,03 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբեկտների նպատակային, կապի հողերի գործառնական նշանակության փոփոխադրելու առաջարկությանը:

2. Համայնքի ղեկավարին՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխման առաջարկության վերաբերյալ կազմված հողաշինարարական գործը ներկայացնել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման ՀՀ Լոռու մարզային հանձնաժողովի քննարկմանը:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մայիլյան Պետրոս | | | |
| Մքոյան Էդիկ | | | |
| Քոչինյան Գարեգին | | | |
| Քոչինյան Տելեմակ | | | |
| Օհանյան Լևոն | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Պ.ՔՈՉԻՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Վահագնի, (0322)6 95 37 , vahagni.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 մարտի 2017թվականի N 08-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ,,ԼՈՌԻ-ՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ,, ՓԲԸ-ԻՆ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության ,,Քաղաքացիական օրենսգրքի,, 594-րդ հոդվածի դրույթներով, հաշվի առնելով ՀՀ կառավարության նիստի 28.04.2016թ-ի թիվ 16 արձանագրությունը՝ համայնքի ավագանին

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Վահագնի համայնքի սեփականություն հանդիսացող, կադաստրային քարտեզի 06-103-0117-0003 ծածկագրի 0.03 հա էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողամասի և նրա վրա գտնվող 6-րդ փողոց 47/1 հասցեի ջրամբարը.

2. Վահագնի համայնքի սեփականություն հանդիսացող, կադաստրային քարտեզի 06-103-0111-0049 ծածկագրի 0.0025 հա էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողամասի և նրա վրա գտնվող 6-րդ փողոց 47/1-1 հասցեի ջրաբաշխիչը

3. Վահագնի համայնքի սեփականություն հանդիսացող, կադաստրային քարտեզի 06-103-0111-0050 ծածկագրի 0.1161 հա էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողամասի և նրա վրա գտնվող 6-րդ փողոց 47/2 հասցեի ջրամբարը.
նվիրաբերել ,,Լոռի-ջրմուղկոյուղի,, ՓԲԸ-ին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

5. Առաջարկել Վահագնի համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով «Լոռի-ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության և համայնքի միջև կնքել գույքի նվիրատվության մասին պայմանագիր, որը ենթակա է պետական գրանցման:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մայիլյան Պետրոս | | | |
| Մքոյան Էդիկ | | | |
| Քոչինյան Գարեգին | | | |
| Քոչինյան Տելեմակ | | | |
| Օհանյան Լևոն | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Պ.ՔՈՉԻՆՅԱՆ